

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 123

**Ֆիզիքական տառապանքներ** – Մինչ Նա մօտեցաւ խաչին, Յիսուսը հանդիպեց ու կրեց զարհուրելի ֆիզիքական նեղութիւն եւ ցաւ: Իր դատաքննութիւնների ընթացքում Յիսուսին ծաղրեցին, թքեցին, ծեծեցին, եւ հայհոյեցին (Մատթէոս 26:67-68, Ղուկաս 22:65, 23:11): Նախքան Իր խաչելութեան, Պիղատոսը Յիսուսին ծեծելու յանձնեց (Մատթէոս 27:26): Ծեծելով Հռովմայեցիք կ'մտրակէին անհատին մի մտրակով (խարազանով) որն կազմած էր կաշիէ պարաններից որոնք ունէին ոսկորի կտորներ կամ ուրիշ սուր բաներ կապած իրենց ծայրերին, որով երբ զարկէին խասօրէն կ'վնասէին, կ'պատռէին ու կտոր կտոր կանէին մարմինը: Անհատը մտրակուում էր ուսերից ցած մինչեւ իր ոտքերի հետեւը: Երբեմն տառապողները կ'նեռնէին հենց միայն այդպէս մտրակումներից:

Կրելով այդպէս դաժան չարչարանք, Յիսուսը ապա Պիղատոսի զինուորներից ստորացեց եւ ծեծեց (Մատթէոս 27:27-31, Յովհաննէս 19:3, Եսայիա 50:6): Եւ որպէս ստորացման մի այլ ձեւ, նրանք որ պիտի խաչուէին ստիպւած էին տանել իրենց խաչափայտը մինչեւ այն մահապատժի տեղը: Սկսած տանելու Իր խաչափայտը (Յովհաննէս 19:17), սակայն ուժասպառած դատերից, անբունութիւնից եւ ծեծերից, Յիսուսը անկարող էր շարունակելու, ուստի զինուորները ստիպեցին մի անցնորդին՝ Սիմօն Կիրենացի անունովին որ կրի խաչափայտը (Մատթէոս 27:32): Զինուորները շարունակեցին ծաղրելու Քրիստոսին, տալով Նրան լեղի խառնուած թթւած գինու հետ, մի շատ դառն եւ անհաճելի խմելիք, որպէսի աւելի աւելացնել Նրա ցաւին (Մատթէոս 27:33-34, Ղուկաս 23:36, Սաղմոս 69:21): Թէպէտ խիստ ծարաւ էր, Յիսուսը մերժեց խմելիքը:

**Մահան միջոցը** – Թէպէտ Հռովմայեցիք գործածում էին խաչելութիւնը որպէս մահապատժի միջոց, սակայն այդ ունէր իր սկիզբը Պարսիկներից: Հռովմայեցիք գործածում էին խաչելութիւնը ոչ-քաղաքացիների, ստրուկների եւ ապստամբների համար: Այս ստեղծուած էր որպէս մի կամաց եւ ցաւալի մահ՝ որը կարող էր տեսել ժամեր, եւ նոյնիսկ օրեր: Հրէաները չէին գործածում այդ որպէս պատժելու մի կերպ, քանի որ նրանք համարում էին այդ որպէս զգուշի մի բան: Եթէ Յիսուսը Հրէաներից մահապատժուած լինէր, հաւանականաբար Նրան կ'սպանէին քարկոծելով, ինչպէս Ստեփաննոսին սպանեցին (Գործք Առաքելոց 7:58-60): Այս նշանակաւոր է, քանի որ Յիսուսը նախապատմել էր որ Նա պիտի բարձրացի (Յովհաննէս 3:14, 12:32): Քրիստոսի մահան բոլոր մասերը այնպէս Աստուծոց նախախնամաբար սահմանուած եւ պահպանուած էին որ այնինչ որ Նա ծրագրել էր տեղի ունեցաւ կատարելապէս:

**Խաչելութիւն** – Որպէսի յանցագործին խաչէին, նրա թելերը տարածում էին եւ իր ձեռքի դաստակները գամում հորիզոնական գերանին: Ապա անձի կրունկները գամում էին ուղղահայեաց գերանին: Տառապողի մարմինը կախուում էր թելերից տարածուած, առաջացնելով շնչառութեան դժարութիւն: Իր դռը լինելով շունչ առնելու դիրքում, անձը ապա պէտք ունէր իր ոտքերով բարձրացնել իրեն վեր, ու իր թելերով քաշէր իր մարմինը վերեւ որպէսզի կարողանար արտաշնչէր: Երբ մարդը կարողանար արտաշնչէր, ապա նա կ'իջնէր իր մարմինը ու եւս շունչ կ'առնէր: Այս վիճակը կ'շարունակէր ժամերով, գուցէ օրերով, մինչեւ անձը վերջապէս ուժասպառուէր, եւ անկարող լինէր վեր բարձրացնելու իրեն շունչ քաշելու համար, եւ ուստի նա կ'մեռնէր շնչառութիւնից (շնչի պակասութիւնից):

Որպէսզի արագացնել նրանց մահը, Հռովմայեցիք կ'ջարդին անձի ոտքերը, որպէսզի նա չկարողանար շունչ քաշելու համար ինքն իրեն վերեւ բարձրացնելու, եւ այսպիսով պատճառում էին շատ աւելի արագ մահ: Այս էր այդ ինչ որ զինուորները արին երկու չարագործներին խաչած Յիսուսի հետ (Յովհաննէս 19:31-32): Սակայն երբոր Յիսուսի մօտ եկան Նրան արդէն մեռած գտան եւ Նրա սրունքները չջարդեցին, բայց Նրա կողը խոցեցին, որտեղից արիւն եւ ջուր դուրս եկաւ (համարներ 33-34): Սրանք վաւերացրեցին որ Յիսուսը արդէն մեռած էր եւ կատարեցին այդ ինչ որ մարգարէացած էր Հին Կտակարանում (Յովհաննէս 19:35-37, Ելից 12:46, Սաղմոս 34:20, Ա. Կորնթացիս 5:7, Զաքարիա 12:10):

Մինչ Յիսուսը կախուած էր խաչից, ծայրայեղ տանջանքի մէջ, Նա դարձեալ անարգեց եւ հայհոյեց անցնողներից, քահանայապետներից, ծերերից, ու նոյնիսկ զինուորներից ու երկու աւագակներից (Մատթէոս 27:39-44, Ղուկաս 23:36-37): Քրիստոսը նոյնիսկ փորձեցաւ ժողովուրդից որ թողնել, մերժել խաչը ու ազատել Իրեն, որը եթէ Նա ցանկանար Նա կարող կ'լինէր անելու (Մատթէոս 26:53-54, Յովհաննէս 18:11): Ուրեմն, հենց նոյնիսկ խաչի վրայ, ֆիզիքապէս Իր ամենաթոյլ կէտում, Քրիստոս դարձեալ յայտնեց Իր Հօր կամքին եղած Իր ամբողջ ենթարկումը եւ կատարեալ հնազանդութիւնը:

Յիսուս, ղէպի Իր մահը, ստացաւ բուռն արհամարհանք ու ատելութիւն. Նա ծաղրեց, փորձեց ու հայհոյեց, հասնելով իր գագաթնակէտին երբ Նա կրեց ամենադաժան պատիժներից մէկը՝ տանելով չարչարելի ու զարհուրելի ֆիզիքական, մտային ու զգացական տագնապ ու ցաւ, մեռնելով խաչի վրայ: Այս բոլորում Յիսուսի մարդկութեան իրողութիւնը դարձեալ ցուցադրուում է՝ որն կրեց սոսկալի եւ ծայրագոյն ցաւ ու տառապանք Իր ժողովրդի համար (Ղուկաս 18:31-33):